տած ռուսերէնով խօսում ու շատ դրամ ստացող ընկերների շուրջը, փեստուած աքլորի նման դառնում:

Անցողներին յառում են վերից վար: Մատով ցոյց տալիս, խօսում: «Սպասի՛ր, չան որդի, քեզի ցոյց կը տանք»...

Շան որդին թուլացած սիրտը դարնում է մայթի դուրս ընկած քարերին, եւ բարեւելու ժամանակ դլխարկը ձեռքի մէջ դողում է: Իր կեանքի անցեալը՝ աննշան դէպքերի այդ տըխուր շարանը՝ սպառնացող սատանայի նման աչքեր է ոլորում: Տասն եւ հինդ տարի առաջ ասուած մի խօսքը («Կեցցէ՛ Խրիմեան Հայրիկը...ես առաջարկում են խմել նրանց կենացը, որոնք, ձմեռուան այս ցրտին, հայրենիքի ազատութեան համար, սարերի կատարին»...) տասն եւ հինդ տարի առաջ ասուած մի խօսքը՝ կատաղած շունի նման յետեւից վազում է, սըրունքը խածնում, տաբատը պատռում, սպառնում, սպառնում... Աչքերը մթնում են, ծունկերը ծալւում, ոտքերը անդունդ դլորւում:

Յետեւից նայում են, ծիծաղում: Ու նա դղում է այդ ծիծաղը, դլուխը կախում է ու վազում:

Գիտակցութեան լուսանկարչական սեւ սենեակի մէջ տեսարանները, անցորդները, վերյիշումները՝ շրջուած՝ խաչաձեւ լոյսերի հետ ներս են խուժում: Մթնած ապակիի վրայ դորշ ստուերներ են նստում, աղօտ լոյսերը սրածայր ձեւեր են առնում եւ ուղեղի մէջ քիմիական մի բաղադրութիւն խայթում է եւ սողոսկում:

Խայթում է եւ սողոսկում:

Լեռ ու դաշտ թառել են սառոյցի վրայ:

Փողոցը մեռած ալիքի նման իր լռութիւնը վեր է ցցում:

Տները միում են:

* * *

Ամենօրեայ լինելիութեան այս աղքատ քերականութեան մէջ բայերը վեր են հանել իրենց ոսկրուտ մատները, եւ մթնոլորտի դատարկ տոպրակում ածականները վիտում են փոքրիկ խժերի նման:

Ահագին, աստեղագիտական մի ոտք կոխել է ամբողջ իր ծանրութեամբ փողոցի մրջիւնային երեթեւեկութեան վրայ՝ տրորում է:

Նախնական եւ միալար հոգիների գոյութիւնը տապլտկում է մեռած բառերի տակ՝ դեռ քիչ շարժուող դիակի պէս:

Ամէն սրտի մէջ մի մենախօսութիւն կայ: Միտքը ծամածռութիւններ է անում:

Հոգեպէս պարզուած քաղաքում ուրուականներ են անցնում:

Մինակութիւնը՝ ձանձրոյթից կուրացած, անթափանցելի, մեղմ խենթութեան բոլոր նըշաններով՝ ման է գալիս ամայութեան դերեզմանաքարերի շուրջը եւ մարած աչքերով յառում է մղլոտ մի էջի վրայ անիմաստ իմաստութիւն որոնելու համար:

— Երեւակայիր, ի՞նչ դէպքեր են պատահում կեանքում... Մի օր Բաղուի կլուբում երկու հազար ռուբլի՝ ցարական ռուբլի կար բանկայում, ձեռքիս փուլ ունեմ... Ալեքսանդր Իվանիչը ասում է երեք հազար, ես ասում եմ չորս հազար. այնտեղից Միխաիլ Մարկոսիչը ասում է հինդ, մէկը հանում է կառէ, միւսը կուլեոր...

— Ձեր զտումը ե՞րբ ա...

— Զտո՞ւմ...մէկը կառէ, միւսը կուլեոր:

— Երէկ սենեակից ինձ դուրս հանեցին: Ես ամիսը տասը ռուբլի ոսկով ո՞րտեղից վճարեմ:

— Ձեր զտումը ե՞րբ ա...

— Զտո՞ւմ... Իշխան ձուկի ֆունտը անցեալ օր 84 կոպէկ էր, այսօր ասում են 80 է:

— Զարեա՛ն, քսան կոպէկ ունե՞ս:

— Ո՞րտեղից:

— Ձեր համալսարանի հնագիտական դասախօսի կինը ծնել ա, դեղի պէտք ունի...

* * *

Կոնդի կողմից պաղ մի ցուրտ է փչում: Մաշուած վերարկուները կոճկւում են:

Միապաղաղ, մեքենական այդ մեռածութեան տակ բոլոր մզանակները փշրուել են: Փոչոտ ճանապարհների եզրին բուսնող խոտերի նման մարդիկ անյաղ ծարաւ են դղում: Կամքերի փտած կոճղը վայր է ընկնում եւ թափած հոդի ձայն հանում:

Ձանձրոյթ, մինակութիւն, բթացում, կենցաղի անողորմ շղթայում:

Այդ անապատը լեցրել է մանաւանդ նըրանց, որոնք մեծ երազ են ծախում:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան